



ԵՐԿԱՆԻ ՇԱՀԱԶԻԶ

ԲԱՆԱՍՏԵՂԾ ՍՄԲԱՏ ՇԱՀԱԶԻԶԻ ԵՎ ՆՐԱ ԱՆՎԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԱՆՏԻՊ ՆԱՄԱԿՆԵՐԻՑ

ՍԱՐԳԻՍ ԶԱՆՈՒՄՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ԱՐԻՍՏԱԿԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԵԴՐԱԿՅԱՆԻՆ

Գերապատիվ Տեռ

Արիստակես Արքեպիսկոպոս Սեդրակյան

Պատիվ ունեցա ստանալ Ձերդ սրբազնության գրութիւնը, որով մի առ մի թվելով կարեւոր խնդիրներ, անհրաժեշտ իրազօրծելի թեմիդ տարեկարգութեան համար, հրովորում եք ինձ նպաստամատուց լինել նյութական միջոցներով:

Հայտնի բան է, որ հոգևորի և աշխարհականաց մտավոր զարգացման համար հարկավոր են զոհաբերութիւն և առանց սորանց դժվար է առաջադիմել: Դուք իսկ հանգամանքը աչքի առաջ ունենալով և կամենալով մի բարի հիշատակ թողնել աշխարհիս երեսին, ես մտադիր եմ, ըստ իմ կարողութեան, կտակել մի հայտնի գումար ազգիս, որով կցանկանայի տեխնիկական կամ արհեստագիտական դպրոց կառուցանել այն երկրում, ուր այժմ քայքայված է ամենայն սարք ու կարգ և, ուրեմն, ավելի կարոտ է մարդասիրության խնամքի:

Այո՛, Գերապատիվ տեռ, այն մեր նվիրական տեղերում, ուր շարշարյալ, այլ տակավին կենդանի նահատակներ, վերջին ճիգը թափելով և վերջին լուծքը քաշելով, մաքսնում են իրենց ազատության համար, —

այնտեղ եմ կամենում իմ հոգուս վարձքն ուղղել, որ գեթ փոքր կարողանամ թելեացնել իմ արյունակիցների վիճակը:

Մեր վեհափառ Տեռը այստեղ լինելով, ես ուխտ արի Նորին Սրբութեան առջև այդ իմ վերջին փափագս կատարել. և նա օրհնեց իմ ուխտը: Ահա թե ինչ պատճառով ես չեմ կարող նպաստ հասցնել Գերապատիւթեանդ այն բոլոր խնդիրների վերաբերմամբ, որ Դուք ինձ առաջադրում եք:

Եթե Գերապատիւթեանդ առաջարկած խնդիրներին նպաստեմ, գլխավոր գործս կթուլանա, որ և՛ Ձեզ, և՛ ինձ միապես ցանկալի չեն:

Ձույզ ընդ սմին ընդունեցեք իմ սիրո հավաստիքը և իմ անսահման ուրախութիւնը, որ Ձեզ պես փորձառու և բարեշնորհ բարձր եկեղեցականը ստանձնել է մի դժվար և պատասխանատու թեմակալ առաջնորդի պաշտոնը:

Տա՛ Աստված Ձեզ երկար կյանք և առողջութիւն՝ հովիւելու և մխիթարելու Ձեզ հանձնված հոտը: Խնդրելով Սրբազնութեանդ օրհնութիւնը

Մնամ պատրաստական սպասավոր ՍԱՐԳԻՍ ԶԱՆՈՒՄՅԱՆ

ՍՄԲԱՏ ՇԱՀԱԶԻԶԻ ՆԱՄԱԿԸ ՍԱՐԳԻՍ ԶԱՆՈՒՄՅԱՆԻՆ

Ազնիվ բարեկամ

Սեդեյ Գալուստովիչ

Ձեր երկտողը, որ թողել էիք գրասենյակիս վրա, մի զարմանալի և անսպասելի տպա-

վորութիւն պատճառեց ինձ: Դուք գրում եք. «Ջանազան պատճառներով խնայում

եմ (ուղեցել է ասել ցավում եմ. Ն. Շ.), որ Ձեր առաջարկությունը չեմ կարող կատարել»:

Այդ ի՞նչ առաջարկություն է իմ կողմից, ես չեմ հասկանում: Իմ ազնիվ բարեկամ, առաջարկությունն եղիլ է Ձեր կողմից, վերաբերյալ այն բանին, որ կամենալով մի



Սմբատ Շահազիզ

բարի գործ գործել ազգի համար, Դուք մըտածում եք կտակ անել և գումար հատկացնել արհեստագիտական դպրոցի համար: Այս միտքը Դուք ինձ հայտնել եք դեռևս անցյալ դարունքին, երբ մենք ման էինք գալիս Ձեր տան պարտեզում: Ես այն ժամանակ հայտնեցի, որ բարվոք է այդ դպրոցը շինել ոչ Աստրախանում, այլ Տաճկահայաստանի քաղաքներից մեկում. և Դուք համաձայնեցիք: Ապա [երբ] մյուս անգամ պատահեցինք, ասացիք, որ դորա մասին գրեմ Վեհափառին և խնդրեմ տեղեկություն տեղի կամ քաղաքի մասին, այլև որ Վեհափառը բարեհաճի օրհնել ձեր բարի նըպատակը: Այնուհետև սկսվեց զրազրություն Վեհափառի հետ, որ օրհնե Ձեր գործը. խոստացավ և տեղը նշանակել — որ է Վանը, գտնելով ավելի հարմարություն: Իսկ այժմ որպես լսում եմ, Դուք ասել եք, որ ես ինքս ինձանից եմ գրել Վեհափառին, առանց Ձեզ. բայց այդ անկարելի է. մի այդպիսի բան բռնել միանգամայն հակառակ է իմ սովորության. Դուք հայտնի բան է, մո-

ռացել եք, ինչ ասել եք: Վերջապես Դուք մոռացել եք, որ ամառն ինձ նամակ էիք դրել և սեպտեմբերին կամ հոկտեմբերին վճռել կտակ անել օրինական ձևով: Կարգացեք իմ պատասխանը Ձեր նամակին և կտեսնեք ասածիս ճշմարտությունը: Ես, իմ ազնիվ բարեկամ, շատ և շատ ցավում եմ, որ այդպիսի հանգամանքներ առաջ եկան, և ավելի ցավում եմ, որ ես մնացի պատասխանատու և՛ Վեհափառի առջև և՛ հասարակության: Ինչ այժմ որպես խորհրդական բարյաց, որպես և Դուք շատ անգամ հղել եք ինձ խորհրդական, խնդրում եմ Ձեզ, որպես հնօրյա բարեկամից, այդպիսի գեղեցիկ և անմահական գործից մի՛ զրկեք Ձեր անունը, Ձեր սիրելի դուստրերի համար:

Այժմ փողի խնդիր չկա, փողը պիտի լինի ապագայի համար. ուրեմն կտակը բարի խղճով կե լող եք անել:

Եվ եթե այս գործից հրաժարվեք, կարելի է հարցնել, արժանի՞ է մեր բարեկամության, որ մենք Վեհափառի և հասարակության առջև պատասխանատու մնանք:

Եթե Ձեր առաջվա միտքը այնքան հաստատ չէր, ապա ինչո՞ւ մենք բոլոր աշխարհը իրար տվինք, ինչո՞ւ նամակներ գրեցի զանազան տեղեր և տեղեկություններ հավաքեցի ապագա դպրոցի մասին:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.— Վերը բերված նամակները պատկանում են բանաստեղծ Սմբատ Շահազիզի գրչին և նրա մահից հետո գտնվել են նրա թղթերի մեջ: Առաջին նամակը, ուղղված Արխատակես Արքեպիսկոպոս Սեդրակյանին, Սարգիս Զանումյանի անունից ու նրա խնդրանքով գրել է Սմբատ Շահազիզը: Այս երկու նամակը, որպես նոր նյութ Սմբատ Շահազիզի կենսագրության համար, անհրաժեշտ համարեցինք տպագրության հանձնել:

Նամակներում խոսքը վերաբերում է հաշտարխանցի մոսկվաբնակ ունեւոր վաճառական Սարգիս Գալստի Զանումյանին, որն իր վաղեմի բարեկամ Սմբատ Շահազիզին հայտնել էր, թե ցանկություն ունի յուր կրթությունը կտակելու ազգին, սակայն երբ գործը հասել էր այդ ցանկության օրինական ձև տալուն, նա զանազան պատճառաբանություններով հրաժարվել էր:

Որ կտակելու ցանկությունը բխել էր իր՝ Զանումյանի հոժար կամքից, այդ մասին առարկություն լինել չի կարող. այդ ակներև է Զանումյանի «Երկրորդ»-ին Շահազիզի գրած պատասխան-նամակից ու Արխատակես Արքե-

պիսկոսություն ուղղված նամակից, որով նա բացատրություն էր տալիս «նյութական միջոցներով նպաստամատուց լինել»-ուց հրաժարվելու պատճառների մասին: Այստեղ խոսք կարող է լինել միայն Ջանույանի հրաժարվելու մասին, որի շարժառիթները նա թաքցրել է «զանազան պատճառներով» անորոշ բառերի տակ: Ինչպես երևում է Ծա-հաղիզին հայտնի են եղել այդ պատճառները, քանի որ նա այդ առթիվ գրում է, «եղբորս հմ Ջեղ, որպես հնօրյա բարեկամից, աղաչիսի գեղեցիկ ու անմահական գործից մի՛ զրուկեք Ձեր անունը, ձեր սիրելի դուստրերի համար»: Պարզ է, որ պատճառը Ջանույանի երկու դուստրերն էին, հանդիսացել, որոնք ղեռ ամուսնացած չէին:

Անկասկած է, որ աղաչիսի մի ունեւոր ու սիրող հայր, մտադրված լինելով իր հարստությունը աղբիւր կտակել, նախապես ապահոված չլինելու իր հարազատներին վայելուչ

օժիտներով: Նշանակում է խոսքը շատ կամ քիչ ժառանգություն մասին է եղել. երևում է նրա դուստրերը կամենալով հոր ամբողջ ժառանգության տիրանալ, համաձայն չեն եղել նրա հետ ու բողոքել են նրա մտադրությունների գեմ, որի հետևանքով էլ, մեր կարծիքով, հայրը փոխել է իր որոշումը: Բուն հայրենասիրությունը, իր անձնական շահերը ընդհանուրի շահերին զոհաբերելը հատուկ է միայն սակավաթիվ ընտրյալների, բայց ոչ Ջանույանի նմաններին:

Խրիմյան Հայրիկը, որն անհամբեր սպասել է Ջանույանի կտակի իրագործման, իր մի նամակում (1901 թ. հունվարի 29-ին) հարցրել է Ծահաղիզին. — «Պ. Ջանույանի կտակ ու՞ր մնաց»: Ծահաղիզին կլինե՞ր իմանալ, թե Ծահաղիզը, իր վաղեմի ազնիվ բարեկամի այդ փոփոխամտությունից մինչև սրտի խորքերը վերափոխված, ի՞նչ պատասխան է տվել կաթողիկոսին:

ՄԱՐԱՏ ՇԱՀԱԶԻԶԻ ՆԱՄԱԿԸ ԵՐԿԱՆԻ ՇԱՀԱԶԻԶԻՆ

Սիրելի երվանդ

Քեզ արդեն այստեղից ուղարկել եմ նամակ նախիջևան, կարծեմ մոտ 31 մայիսի: Երեւի այդ իսկ միջոցին (3,4) գնացած լինեք ձեր ներկա ամարանոցը: Այնտեղ գրել էի, որ Ստեփանը մայիսի վերջին պիտի մտնէր ձեր քաղաքը և անձամբ հետո տեսնվե՞ր կամ, լավ է ասել, տեսակցե՞ր: Թե ի՞նչ եղավ, չգիտեմ: Իսկ Մկրտչի հետ, ասածդ կշռելով, ավելորդ համարեցի խոսել քո գործի մասին: Ուրախ եմ, որ այժմ գոնե առաջին նամակս չես ստացել, որովհետև, միտ ղենելով քո բարոյական ամպերին, որով պաշարված ես ներկայումս, կան այնտեղ և իմ ամպերը, որոնց հետևանքը մինչև այսօր շարունակվում է, բայց այդ բոլորը տանելի է, որովհետև նյութական են: Ինչ և ասես, էլի պիտի մտնես մեյտան և գործես, այնտեղ միայն բազումներդ կամրանան, ապա կսրբեն ասպարեզդ փուշերից: Հասակդ քեզ տալիս է այդ բարոյական առաքինության ուժերը՝ և փափուկ, և թարմ, և մտավոր: Ո՛չ, տակավին հարկավոր չէ վհատել:

Առաջին նամակումս ի միջի այլոց գրած էի, թե այժմ ես կարդում եմ Խալաթյանի գործը Մովսես Խորենացու մասին և տեսնում եմ, որ ունի արժանավորություն: Արժանավորությունը նրանում է, որ բոլոր Խորենացու մասին հրատարակած գրականությունը, այսինքն այլ և այլ թե. տոհմա-

լին, թե օտար թարգմանիչների ու կրիտիկական հոդվածների շրջանակը հավաքած-ամփոփած ի մի, երբեմն և ինքնուրույն դատողություններով ու լուսաբանություններով: Սակայն պ. Խալաթյանից նոր աշխատության հիմնադիրը, եթե կարիքի է ասել Լաւրաշը, է Գարագաշյանի «Քննական Պատմություն Հայոց», որ և քեզ ծանոթ պիտի լինի: Այս գրքի ոգին, ուղղությունը, ներազնին վարիանտները ծառայում են պարոնին որպես որոնողի կշռող և չափող թել կամ լուր: Ապա առաջ են դալիս անցյալ և ներկա դրերիս արձնանիստների կարծիքները, ինչպես եղբայր Վիստոնների, Քատրմերի և, վերջապես, Լա-Կրոզի և Կարիերի, և այլն: Թե Խորենացու անձը և նորա հեղինակությունները առհասարակ պատած միգրով և այս պատճառով գուշակելի և խորհրդավոր են, այդ անտարակույս է, բայց թե եղել է մեզ համար մի անհայտ աղբյուր կամ մի գրավոր ավանդությունների շարք, — այդ էլ անտարակույս է: Այդ բոլորը երևում է Խորենացու և ոճից և միայն նորանից հաղորդած առաջին առասպելական նահապետների կյանքից. երեւակայի, որ նորա տված անուններից հին նահապետներին ոչ միևն չի երևում մեր ազգի պատմության առաջին դարերում. բայց արդարեւ ես միայն մի տեղ նկատում եմ Առաքին անունը և այդ հայտնի

է (եթե միայն ընթերցանությունը ուղիղ է) Ասորեստանի բեռնագիրներից, որ 841 Ն. Ք. մեր դարադուխը Սամանասար գնաց արշավեց ուրարտացիների վերա և հարվածեց նոցա թագավորին՝ Արամին Ինչ և իցե սոցա և սոցա նմաններին, երևի, և դու մասամբ տեղյակ ես: Խալաթյանցը և կամ ուրիշները շատ տեղերում հասնում են ծայրահեղության, զոր օրինակ մի կտոր հանեմ նրա շարադրությունից և դնեմ առաջդ: Խորենացու հատվածը Տորթի մասին քննելով և դալով այն տեղին, որ ասում է «Եվ գրել նոյնպես ըզրեգամբը խրովք արծուիս և այլևս այսպիսի».— «Из них (из подвигов) первый, по моему мнению, совершенно не сообразен, так как «изчертание ногтими на гранитных плитах орлов и тому подобное» предполагает в исполнении известную степень **культуры**, знакомство с художеством, что совсем не к лицу такому чуждо-племенному уроду, каков Торг».

Մեկը հարցնի. տո, տնաքանդ, խո այստեղ շեշտը կամ խոսքը կուլտուրայի կամ գեղարվեստի վերա չէ, այլ եղունգների ֆիզիկական ուժի, հզորության, ինչպես մի փոքրը վերն ասած է ձեռքի համար, օրինակ «Բուռն հարկանել նմա զործաքար վիմաց ձեռք և ձեղքել ըստ կամաց մեծ և փոքր»:

Բայց դու այդ գործի ճաշակը կառնես, երբ որ կկարդաս: Բայց որ նորա առջև չմեղանչես, նախ պիտի կարդաս Գարագաշյանը:

Գարագաշյանի Քննական Պատմությունը արդարև պիտի մի պատմավոր տեղ բռնի մեր նոր գրականության մեջ. նորա փորձառու գրիչը, նորա լուսավոր աշխարհադիմումությունը շատերի համար շատ բան է պարզում մեր անցյալ կյանքից և տալիս է մի ընդհանուր նկարագիր մեզ սոցիալական կազմակերպության, վերլուծելով և համակարգելով այդ կազմակերպության պայմանները համաձայն այժմյան եվրոպական գիտության: Բայց երբեմն այնպիսի աննպաստ պահանջմունքներ է անում անցյալ կյանքից և առհասարակ այն դարերի ուղղությունից որ, իմ կարծիքով, իրավունք չունի: Բավական կլինի դրա համար քեզ մի օրինակ բերեմ: Խոսելով Խորենացու կեղծիքի մասին, վերաբերյալ մարաբասյան աղբյուրին, նա ասում է. «Հեղինակ մարաբասյան պատմության որպես Նինուեի և սեմական լեզվաց դպրության, նույնպես մարդկային ազգին ծագման, հնություն, բաժանման և լեզուաց բաժանման անտեղյակ կլվի (և զարմանալի է որ տեղյակ լինեք)... Նույնպես չգիտնալով թե ազգերը լեզուով և տեղյակ ուրույն և տարբեր բուններու ճյուղեր են, որոց սկիզբը նախապատմական է, կկարծե

թե հնգվորդական բունին վերաբերյալ ճյուղ մը, որպիսին են Հայք, յուր գետնեն դուրս և յուր բունեն զատված, իբր թե ինքնորեն հառաջ եկած էր Բաբելոն, բոլորովին օտար և տարբեր բուն մը հույին վրա: Նույնպես ենթադրելով թե բոլոր մարդկային ազգը կգտնվի Բաբելոնի երկիրը, երկնաբարձ աշտարակ մի շինելու դբադալ, կկարծե թե այն ժամանակ, այսինքն իբր 2.240 տարի առաջը չբր. Հայաստանի կողմերը և անտի այդ բոլոր երկիրը դեպի հյուսիս ամառի և անրնակ էր» և այլն: Եվ հետո ինքր իսկույն ավելացնում է. «Այս պատմությունը կամ մանավանդ ենթադրությունը անցյալ դարերու մեջ կրցան իբրև ճշմարիտ կամ գեթ իբր հավանական ընդունվի. բայց զարդիս, մանավանդ ի վերջին 15 կամ 20 ամաց հետո դրական գիտությունը զծագման, զհնությունն և զբաժանմանց մարդկային ազգին այնպիսի և այնչափ լույս տված են, որ այս խնդրո վրա հին վարդապետությանը կամ կարծյաց շատերը եթե ոչ բոլորովին զտված, գեթ մեծապես փոխված կամ չափավորված են»: Թե եթե այս բոլորը այսպես է, ի՞նչպես կարելի է պահանջել, որ այդ բոլոր նորանոր գյուտերը, որ այն ժամանակ տակավին գյուտեր չէին, այն հին մարդիկը իմանային:

Սույնպես ոչ ամենեկին լուգիական է, ասեմ և բարոյական, նորա եզրակացությունը վարդանյան և Վասակյան կուսակցությունների մասին: Նա ասում է, որքան վարդանը զաղափարական էր, զանկացող միայն մարտիրոսության, նույնքան Վասակը աշխարհագետ էր, քաղաքագետ և դիպլոմատ նեղկա մտքով. Վասակը, իմանալով որ տկար Հայոց ուժով միայն չի կարող կամ չեն կարող ընդդիմանալ Պարսից ահագին գործության, համերաշխ չէր Վարդանանց հետ, զանազան միջոցներ էր դիմում նրանց ապստամբությունը չափավորելու և ազգի ընդհանուր փրկությունը հայթայթելու: Այդ բոլորը լավ է և մենք ընդունում ենք նորան հանձարեղ և հեռատես մարդ: Բայց ի՞նչ ասենք նորան, ի՞նչպես հասկանանք բուն հայրենասիրական և առաքինության զգացմունքը, երբ որ նույն ինքը Վասակը դեմ հանդիման կանգնեց յուր հայրենակիցներին նույն վերջին բախտավճիռ կովին Ավարալի դաշտում, սկսավ միացյալ նախաբանների գործով նեղաձիգ լինել և դիպատ թափալել գետին յուր հարագատենքին: Այս է՛լ հեռատեսություն էր:

Բայց Գարագաշի գիրքը ըստ ամենայնի է պատմական և գեղեցիկ սնունդ կարող է մատակարարել մեր ազգին:

Եթե հանկարծ թեւոր ստանայիք և թռչեիք այս կողմերը, չէիք հավատալ որ երբեմն եք, այնքան փոխվել է այս ամառը եղանակը: Զերմաշափը մինչև այսօր ցույց է տալիս ու: ավելի քան 20, 22, իսկ ծանրաշափի սլաքը բոլոր ժամանակ համարյա անշարժ ուղղված է դեպի ծայրը փոփոխականի: Գիշերները դուլ են. պառկում եմ փակ լուսամուտներով, իսկ օրերով անդադար կամ հեղեղում է կամ մաղում է անձրև: Երևի ձեր նոր ամառանոցում ավելի տաք է քան թե այստեղ: Զարմանայի է. որ փորակապությունս այստեղ ավելի է նեղում քան թե Մոսկվայում. այդ շատ բնական է. այնտեղ սեղանս կանոնավոր է, ամոքիչ կերակուրները և ընդհանր ու բանջարեղենը անպակաս: Մրանց պետք է վերադրել ստամոքսիս դրությունը: Եթե այս նշովյալ անխուսափելի հիվանդությունս չլինեի, կատարյալ առողջ կլինեի: Ուրեմն մնացեք բարով: Միտր ողջունս մատուցանես սիրեցյալ Հեղինեին:

Միտր Ձեզ Ս. ՇԱՀԱԶԻԶ

15 հունիսի

ՄԱՆՈՒԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.— Նամակի մեջ հիշատակված Գարագաշյանը V դարի գրաբար լեզվի մեր հայտնի մասնագետը և մեր քննական պատմության առաջին լուրջ քննադատ հեղինակ Անտոն Մադատի Գարագաշյանն է: Նա ծնվել է 1818 թվի փետրվարի 11-ին Պոլսում, հայ կաթողիկոսական ընտանիքում: Սկզբնական կրթությունն ստացել է Պոլսում. այնուհետև 1832 թվին ուղարկվել է Վիեննայի Մխիթարյան վանքը, որ ութ տարի մնալով, 1840 թվին հաջողությամբ ավարտել է ուսման լրիվ դասընթացն ու քահանա ձեռնադրվել:

Չբավարարվելով իր ստացած կրթությամբ, 1843 թվին Գարագաշյանը դիմում է Վիեննայի կայսերական համալսարանի վարչության և ընդունվում բնագիտության ու փիլիսոփայության ֆակուլտետը: Մեզ անհայտ է, թե նա ավարտել է այդ ֆակուլտետը, թե ոչ, բայց հայտնի է, որ ուսած գիտությունների ազդեցության տակ փոխվել է նրա աշխարհայացքը ու նա սկսել է տատանվել իր կրոնական համոզումների մեջ և միտք է հղացել թողնելու կրոնավորի կյանքը:

Այդ ժամանակները վանքում մեր բուն V դարի լեզուն որոշելու ու ճանաչելու համար մի կարևոր աշխատանք էր տարվում, որը պահանջում էր ջանքերի մեծ լարում. ահա հենց այս աշխատանքին էլ ձեռնաձուլվել է լինում Գարագաշյանը: Աշխատանքը

գլխավորում էր հայր Հովսեփ վարդապետ Գատրճյանը, իսկ Գարագաշյանը հանդիսանում էր նրա աշխատակիցն ու օգնականը:

Աշխատանքի արդյունքը լինում է բուն V դարի լեզվի որոշումը, որը գործածության մեջ է եղել 405—450 թվականները: Այդ լեզուն անվանվում է «Մեսրոպյան լեզու». հենց այս լեզվով էլ Գարագաշյանը Գատրճյանի օգնությամբ ֆրանսերենից թարգմանում է Բոսխի հռչակավոր «Տիեզերական պատմություն»-ը:

Վանքի վարչությունը նկատելով Գարագաշյանի ստանուկությունը կրոնի հանդեպ, հանում է նրան վանքից ու ուղարկում նախ Զմյուռնիա և ապա Պոլիս. այստեղ նա թողնում է քահանայությունն ու կաթողիկոսությունը և դիմում հայոց պատրիարքարան, ըստ հանդիպում է անտարբերության: Այնուհետև նա բողոքականություն ընդունելով դառնում է հայ բողոքականների «Անտաբեր» շաբաթթվաթի աշխատակից, որպիսի աշխատանքը տևում է մինչև 1839 թվականը: Իր կյանքի վերջին օրերին նա դարձյալ վերադառնում է կաթողիկոսության և 1903 թվին վախճանվում է Պոլսի Ս. Հակոբա անկեղանոցում, ուր նա ապրում էր: Գարագաշյանը թողնում է հայ կաթողիկոսների գերեզմանատանը. նրա հուղարկավորությունը մասնակցում էր Պոլսի ու Զմյուռնայից եկած հայ գրական ողջ աշխարհը՝ առանց դավանանքի խտրության:

Գարագաշյանը թողել է 35 գրվածք, որոնցից երեքը միայն թարգմանություն են, իսկ մնացյալը ինքնուրույն են և նվիրված հայ լեզվի ու գրականության խնդիրներին: Դրանց մեջ ամենանշանավորը հանդիսանում է նամակի մեջ հիշատակված «Քննական պատմություն Հայոց» աշխատությունը, ապա գալիս են Կորյունի պատմության ուսումնասիրությունը (Ս. Մեսրոպի կենսագրությունը) և «Ճաշակ Ոսկեղեն Դպրոթեան» պարբերականը, որ նա հրատարակում էր գրաբար լեզվով 1879—1881 թվականներին իր աշակերտ՝ գրաբարագետ Հ. Գուրգենի օգնությամբ: Այս պարբերականում V դարի լեզվի մասին գրում է. «Այս աշխատություն է, որով գրեաց մեծն Եղնիկ, պերճն Ագաթանգեղոս, ընտանին Բիւզանդ, սքանչելին Կորին...: Այս աշխատություն է, զոր տեսանեմք թեքեալ առ ամենայն նիւթ ըստ արժանի և ըստ պատշաճի, ծանր՝ յաղօթս, պարզ՝ ի վարդապետութիւնս, սաստիկ՝ ի յանդիմանութիւնս, մեղմ՝ ի խրատս, ծաղկայից, ծաղկաւէտ՝ ի նկարագիրս, հոյա-

կապ՝ ի վիպասանութիւն, միշտ և յամենայնի յստակ, զգօն և վայելուչ ի զարգարան համեստ և շքեղ, առանց պճրելոյ և հպտելոյ»^{*)}

Նամակիս մեջ հիշված Ստեփանը մեր

դասընկեր, ոչ անհայտ, Ստեփան Մամիկոնյանն է, իսկ Մկրտիչը՝ Մոսկվայում հրատարակվող «Պատմական և գրականական հանդէս»-ի խմբագիր Մկրտիչ Բաբխուղարյանն է:

ԲԱՆԱՍՏԵՂԾ ԱԼԵՔՍԱՆԴԻ ԾԱՏՈՒՐՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՄԿՐՏԻՉ ԲԱՐԽՈՒԳԱՐՅԱՆԻ



Ա. Ծատուրյան

Սիրելի Մկրտիչ

Թանկագին նամակդ ստացա և ահա շտապում եմ պատասխանել:

Հաղորդած մի քանի ուրախալի տեղեկություններդ, իրավ որ ուրախալի էին և անշափ ուրախացրին ինձ:

Նամակիդ այն մի քանի էջերը, որոնք փոքր ի շատե ընդհանուր, հասարակաց բնավորություն ունեին, կարդացի Սմբատի մոտ: Նալբանդյանի հրեք հոգվածներից առաջինի մասին ասաց. «Որքան հիշում եմ, այդ հոգվածը տպված է եղել «Հիստորիա»-ում և, եթե չեմ սխալվում Նալբանդյանը նրա մեջ մեծ համակրանքով ու գովա-

սանքով է վերաբերվում դեպի «Հիստորիա»-ն ու նրա լեզուն»: Այսուամենայնիվ պետք է ինքդ վերաստուգես, Մկրտիչ: Ես կարծում եմ, որ թե Մոսկվայում և թե Պետերբուրգում հեշտությամբ կարելի է «Հիստորիա»-ի համարները ճարել: Գայով հրկրորդ հոգվածին, ահա ինչ կարծիք հայտնեց մեր հարգելի բանաստեղծը. «Պետք է առանձին ուշի դարձնել հոգվածի բովանդակությանը, — ասաց նա, — որովհետև այդ աշտույթունը Նալբանդյանի հնագույն գործերիցն է, «Հիստորիա»-ից առաջ է գրված, այսինքն՝ այն ժամանակ, երբ նա (Նալբանդ.) դեռ ավելի դուռ էր գրաբարի հետ, քան թե աշխարհագրի: Եթե հոգվածի մեջ շոշափվում են հայկական դպրության վերաբերյալ այնպիսի կարևոր, լուրջ և, մանավանդ, նորանոր հարցեր ու խնդիրներ, որոնք կարող են մի հայտնի օգուտ բերել, մի խոսքով, եթե հոգվածի մեջ չէ երգված այն, ինչ որ հազար անգամ երգվել ու երգվում է, խո այն ժամանակ ոչ թե պետք է, այլ անհրաժեշտ է թարգմանել և տպել. իսկ եթե հոգվածը մի հին երգ է, յուր բովանդակությամբ մի անախրոնիզմ է, չարժեք աշխարհ հանել»:

Այս է մոտավորապես Սմբատի հայտնած կարծիքը:

Սմբատին նույնպես ասացի, որ գնում ես Պետերբուրգ և որ այնտեղ պ. Նալբանդյանի պատանալու ես Նալբանդյանի մի քանի գրվածքները: Տարակուսանք հայտնեց, որ Նալբանդյանի ճանկերից կարող ես մի բան դուրս գրել: Հավատացնում է, որ նա շատ եղութու մարդ է, Նալբանդյանցի և Նալբանդյանցի ազատ գաղափարների հալածիչ, փթած, նախապաշարված և ամենաոխսերիմ թշնամի ամեն տեսակ նոր և ազատամտական ուղղության, թարմ և վառվող գաղափարների: Խորհուրդ է տալիս, եթե, բան է, կտեսնվես Նալբանդյանի հետ, այնքան էլ սրտաբաց չգրտնդվել նրա մոտ և աշխատել, որքան կարելի է, երիտասարդական վառվռուն և պայծառ հոգեկան աշխարհիդ վեհ խորհուրդները և նվիրական ձգտումները քողարկված պահել նրա հնամուլ հայացքից... Ես էլ եմ խոր-

^{*)} Տես Ե. Բոֆյանի «1905 թվի օրացույցը», որից բաղել ենք Գարալույանի կենսագրության վերաբերյալ տեղեկությունները:

հուրդ տալիս առհասարակ քեզ զսպած պահել, Մկրտիչ: Ով գիտե... աշխարհումս դառնազգեստ գայլեր շատ կան... Սմբատի խոսքն իմ աչքում մեծ կշիռ ունի: Եթե մեր մեջ կան մի քանի աշխարհի անհատներ, որոնք իրենց անկեղծությամբ, անաշուտությամբ և դառն փորձառության շնորհիվ կարող են մարդաճանաչության արժանահավատ և համարյա անսխալական ավտորիտետներ համարվել, ապա դրանցից մեկը Սմբատն է:

Վերոհիշյալ տողերն ինձ հիշեցրին մի տխուր և ողբալի փաստ, որ տեղի ունեցավ մի քանի ամիս սրանից առաջ Թիֆլիսում: Իմ մի երիտասարդ մտերիմ ընկերը — մի անկեղծ ոգի, ազգի և հայրենիքի մի անձնը — վեր անդամ, մի խոքով մի անսպառ աղբյուր աղնիվ և սրբազան դպցամունքների — ամբողջ 2 տարի բանտում մաշվելուց հետո, յուր մատաղ կյանքը կնքեց զինվորական հիվանդանոցում: Նա մեղադրվում էր, որպես քաղաքական հանցավոր, որպես ընդդեմ տերության շահերի՝ յուր ազգի շահերը պաշտպանող, որպես յուր եղբայրների մեջ ազատության սերմեր սերմանող և այլն, և այլն... Խո գիտես թունավոր լեզուները ինչեր կարող են հնարել... Եվ թշվառը զոհ գնաց անարգ դավաճանությանը, զոհ գնաց, որովհետև մանկական անկեղծ հավատով բաց էր անում յուր սիրանվեր կտրծը քուռ և կեղծ մտերիմների առջև... Այս փշուռ և թունալից աշխարհում հաճախ տեղի ունեցող այդ սրտաճմլիկ երևույթը այնպես խորը խոցեց սիրտըս (երբ 10 օր սրանից առաջ նամակ ստացա Թիֆլիզից), որ միանգամայն հուզվեցա և որպեսզի մի կերպ հանդարտեցնեմ սիրտըս, աշխատեցի այդ դառնությունը նույնությամբ թափել թղթի վերա: Եվ թափեցի... գրեցի մի ոտանավոր: Սմբատը շատ հավանեց: Ուղարկած նյութերիս թվում և այդ ոտանավորը կլինի:

Ո՛հ... համա խոսեցի հա... Երեկ, գլուխդ տրաքեց: Ներողություն: Ի՛նչ արած, Մեկրտիչ: Տերն ազատի, երբ մարդու սրտի տոպրակը բացվում է, էլ թերանը փակելու հնար չի լինում...

Ցավալի է, որ մինչև օրս ոչ Հովհաննեսիցըն էս նամակ ստացել, ոչ Գարեգնից: Մկրտիչ, վախում եմ, թե նոր դիրքը, շրջապատող մթնոլորտը և նրանց հեղափոխեն, և նրանց մեջ խեղդամահ անեն այն բոլոր վեհ և նվիրական զգացմունքները, որոնց հոգով տաճարում ամբարած, տարան իրենց հետ Մոսկվայից: Սակայն ո՞վ գիտե, գուցե,

չարաչար սխալվում եմ... Տա Աստված, երկյուղս երազ լինի...

Նա նամակ եմ գրել Հովհաննեսին. տեսնենք ի՛նչ կլատասխանի:

Գյուլի դը-Մոպասանի և Կատուլ Մենդեսի զրույցները դեն դրի, որովհետև այս օրերս բուրբուրվիս պատահմամբ, կարծես երկնքից վայր ընկավ, ձեռքս ընկավ «Отечест. записки» գլուխն ու պողը կտրած մի համարը, որից ահա արդեն երկրորդ քնն է, ինչ թարգմանում եմ (իմ և Սմբատի կարծիքով) մի գեղեցիկ վեպիկ, մի բանաստեղծական գողտտիկ պատկեր, որ առնված է իրականից: Վեպիկը կրում է «Ուտամնասենչը» վերնագիրը և վերցրած է ուսանողական կյանքից:

Ի նկատի ունեցիր, Մկրտիչ, որ բացի այդ, երկրորդ գրքի համար ինձանից և մի շորս-հինգ բանաստեղծություններ կստանաս, որոնցից մի քանիսը -- ավարտածները, ենթարկվել են Սմբատի քննությանը և դիմացել են նրա անաշուռ ու խիստ կրիտիկային: Հա... Սմբատի անունը տվի, միտս ընկավ: Գիտես ի՛նչ կա, Մկրտիչ: Մի օր նա հետս զրույց անելիս, չգիտեմ ինչպես եղավ, հակառակ յուր ցանկության, հանկարծ բերանից դուրս շարտեց, որ ինքը դեռ «Լեոնի վշտի» լույս տեսնելուց առաջ, երկու ոտանավոր ունի գրած «Հիստասիայի»-ի, կարե՛նեմ, առաջին տարվա համարներում, որոնց համար խիստ ցավակցանքով սասց, որ մոռացմամբ չեն մտած «Լեոնի վշտի» մեջ: Ոտանավորներից մեկը կրում է «Պոետ» իսկ մյուսը «Սևորակ աշեր» վերնագրերը, և հիրավի, այդպիսի վերնագրերով ոչ մի ոտանավոր չկա «Լեոնի վշտի» մեջ: Իմ կարծիքով, Մկրտիչ, կարելի էր թույլտվություն խնդրել իրենից (ասում եմ թույլտվություն խնդրել, որովհետև ես փորձեցի առաջարկել և փոքր ինչ չեմ ու չում արավ) և նորից տպագրել նրանց, որոնք մեծ սիրով ու համակրանքով կկարդացվին և կկարդացվեն, որպես ամենքից սիրված մի բանաստեղծի հոգով անկեղծ զեղմունք, մի չեքմ ոգևորություն, որ հանված է հնության փողուց: Այո, նրանք ամենքից սիրով կկարդացվեն, որպես մի թարմ և նոր գործ, որովհետև 1) այդ ոտանավորները չեն մտած նրա առանձին գրքով հրատարակած բանաստեղծությունների ժողովածուի (Լեոնի վշտի) մեջ, 2) վաղուցվա գրված են և 3), որ ամենազխապիւրն է, տպված են այնպիսի մի հանդիսում, որ ներկայումս եթե Դիոգենեսի լապտերով էլ փնտռես, էլի չես գտնիլ այդ հանդիսի ոչ ուզածդ և ոչ էլ չուզածդ համարները: Դու ի՛նչ

կասես, Մկրտիչ, այս բանի համար: Սմբատը սիրով ընդունեց չեղած ողջունդ և փոխադարձաբար ողջունում է և քեզ:

Ընկերական վառ սիրով սեղմում եմ ձեռքդ:

ՔՆ Ա. ՄԱՏՈՒՐՅԱՆ

1888 թվաթիվ: 3-ին

Նիմֆի

ԵՄԼՆՈՒԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. — Մեր համակրելի բանաստեղծ Ա. Մատուրյանի այս նամակն ուղղված է Մոսկվայում հրատարակվող «Պատմական և գրականական հանդես»-ի խմբագիր Մկրտիչ Բարխուդարյանին:

Ա. Մատուրյանը, որքան մեզ հայտնի է, չբավոր ծնողների զավակ էր: Ներսիսյան դպրոցի լիակատար դասընթացը դեռ չավարտած, նա Թիֆլիսից մեկնում է Մոսկվա, օժտված բանաստեղծական ձիրքով, բայց տակավին շատ թերի գիտությամբ ու վատառողջ կացությամբ:

Մոսկվայում նա իր ապրուստը հոգացել է մեծահարուստ ժամհարյանների բանկային գրասենյակում ծառայելով և Մոսկվայի վերաբնակիչ նոր նախնական ուսուցչական Շորշորյանի մոտ տնային ուսուցչությամբ պարապելով:

Բանաստեղծ Սմբատ Շահազիզը նկատելով նորեկ ֆրիտասարդի շնորհալիությունը, նրա և իր միջև մտերմական հարաբերություններ մշակելով, հովանավորել է նրան, իր մշտական գրույցներով, փորձառու խրատներով աշխատելով լրացնել նրա գիտության թերին: Ինչ վերաբերում է նրա ապագինմանը, ապա այս խնդրում էլ նրան օգնած լինելու համար, Շահազիզը մի երկու ամառ նրան իր հետ տարել է թե՛ Նիմֆի, Վոլգայի սառնորակ ջրերում լողանալու, և թե՛ Ղրիմի ծովափնյա Ալուսիկա ամառանոցը: Այսպիսով Մատուրյանը կազդուրվել ու հասունացել է թե՛ իրրե անհատ և թե՛ իրրե բանաստեղծ: Մատուրյանի վրա նամանավանդ զորեղ ազդեցություն է ունեցել կազարյան ձեմարանին և Սմբատ Շահազիզին մոտ կանգնած ժամանակի ուսանողական մի փոքրիկ խմբակ—բաղկացած Մինաս Բերբերյանից, Յուրիյ Վենելովսկուց, բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանից, Մկրտիչ Բարխուդարյանից և Գարեգին Ծնգիրարյանից, որոնք ամենքն էլ գրելու սեր ու շնորհք ունենալով, պատրաստվելիս են եղել բարձրագույն կրթություն ստանալուց հետո նվիրվել գրական գործունեության: Այս խմբակի մեջ է ներգրավվում նաև Ա. Մատուր-

յանը, որին խմբակի անդամներն օգնում են ուսերեն սովորելու և ուսու դասական գրականության երկերի ընթերցման կարևոր գործին ընտելանալու:

Նամակը բովանդակվից է և պարունակում է մեր գրական ոչ հեռու անցյալին վերաբերող շահեկան տեղեկություններ, որոնք այլ աղբյուրներից մինչ օրս մեզ ծանոթ չեն եղել:

«Էջմիածին» ամսագրի էջերում սրանից առաջ տպագրվել էր մեր «Կարապետ Նզյան, Մկրտիչ Սանասարյան և Լևոն Տիգրանյան» խորագրով հոդվածը, որի մեջ մենք ի միջի այլոց, մեջ էինք բերել Կարապետ Նզյանի ոչ շատ էլ հաճելի բնութագիրը Լևոն Տիգրանյանի «Իմ յիշատակարանը»-ի տվյալների հիման վրա: Թեև Նզյանի մասին Տիգրանյանի գրածները մեջ էինք բերել վերապահությամբ, բայց և այնպես հոդվածիս ընթերցողների մոտ ներհակ կարծիքների հանդիպեցինք: Սույն հրապարակվող նամակում հաղորդված տեղեկությունները սակայն գալիս են հաստատելու մեր հիշատակած աղբյուրից քաղված տեղեկությունների ճշտությունը: Այդ տեղեկությունները հաղորդողը բանաստեղծ Սմբատ Շահազիզն է, Նզյանի ժամանակակիցը, նրան լավ ճանաչողը, հետևաբար չենք կարող հավատ չընծայել նրա հաղորդածներին:

Սմբատ Շահազիզը հաղորդել է նաև այն, որ ինքը «Հիախսափայլ»-ում տպագրված երկու ոտանավոր է ունեցել, «Պոետ» և «Սեվորակ աչիք», որոնք մոռացության հետևանքով դուրս են մնացել «Լեոնի վիշտը» գրքից. դրանցից երկրորդն իբրև թե տպագրված պիտի լիներ «Հիախսափայլ»-ի առաջին տարվա համարներում:

Արդ, մենք որոնումներ կատարելով գտանք այդ ոտանավորներից միայն առաջինը, իսկ երկրորդը չգտնվեց մեր որոնումների ընթացքում—սակայն մենք գտանք Սմբատ Շահազիզի նաև ուրիշ երկու ոտանավորը՝ «Առ գեղեցկուհի Կ...» և «Ազատ մարդ», որոնք մոռացության հետևանքով կամ մի այլ պատճառով չեն մտել «Լեոնի վիշտը» գրքի մեջ ղեկավարված մանր ոտանավորների շարքը:

Այսպիսով Սմբատ Շահազիզի գրած և «Հիախսափայլ»-ի էջերում տպագրված երեք ոտանավորը մոռացության հետևանքով կամ մի այլ պատճառով չեն մտել 1865 թվին տպագրված «Լեոնի վիշտը» գրքի մեջ:

Այդ երեք ոտանավորները տպագրվել են «Հիախսափայլ»-ի հետևյալ թվերի տետրակներում.—

Ազատ մարդ— 1862 թ. ապրիլ:

Առ դեղեցկուհի Կ... — 1862 թ. հուլիս:

Պոետ — 1864 թ. մայիս:

Ինչ վերաբերում է «Սևորակ անձեր» խորագրով ոտանավորին, որը չգտնվեց «Հիսթորիայի»-ում, ապա մենք գիտենք, որ այդպիսի խորագրով ոտանավոր իրոք որ նա գրել է և այն էլ հուսակա՞ն «Они чуждые, они жгучие» երգի հետևողականությամբ, բայց թե ի՞նչ է եղել նրա բնագիրը, դժվարանում ենք ասել: Կարծում ենք սակայն, որ դրա բնագիրը Ս.

Շահագիրը կարող էր տված լինել Դավիդով աղգանունով հայ երգչին, որը հաճախակի այցելում էր նրան:

Նալբանդյանի գրաբար հոգվածների մասին մենք տեղեկություն չունենք:

Թիֆլիսում կալանավորված և զինվորական հիվանդանոցում Մատուրյանի վախճանված ընկերոջը նմանապես չենք ճանաչում:

Վերջում տալիս ենք Սմբատ Շահագիրի «Հիսթորիայի»-ում տպագրված ոտանավորներից մեկը՝ «Պոետ»-ը:

Պ Ո Ն Տ

Պոետ, հեռու կաց ծափից ամբոխի,
Երբ քեզ տիրում է ոգևորություն
Նա ծանր ցնոր է մի հիվանդ սրտի,
Մի խախուտ խելի բելադորություն:

Դու պաշտոնյա ես վերին սրբության,
Որ հուիք ես Աստուած աշխարհին.
Դու պիտի հերքես հասարակության
Կանխամուտ կարծիք, դու սաստես չարին:

Մի՛ մեծարիր դու կուռքը հարստի,
Ոտնակոխ արա՛, փշրի՛ր ու անցկաց.
Տաճար Աստուծո-հոգին պոետի
Թե մամոն իշխեց-դժոխս է պղծած:

Եվ այն ժամանակ, երբ քեզ հանելին
Կախաղան կամ սյուն նշավալելի,
Եվ անփառ նակատդ մեռնի ծեփերին,
Արժանի ես դու, բշկառ, արժանի:

Ահա ձերենին կանաչ նշտաբերով
Շնորհակալ սրտի զոհաբերություն
Պոետ, զարդարիր նակատդ նորանով,
Թե օրեկ ես ազգդ և արդարություն:

Ահա երջանիկ առաջին հայեր
Քեզ շիրիմներից ողջույն են տալիս
Ահա գալոցֆի հեռավոր բոռներ
Երգում են սաղմոս գործիդ պատվելի:

Օծյալ Աստուծո, եղիր դու քարգման
Այս մեծակշիռ գաղափարների,
Որ կարող էին անունդ անսահման
Դարերին բաշխել, փառք կնքել բարի:

Ո՛վ ես մեր օծյալ, բայց, լեզու, լոհ՛ր,
Ու՛մ հետ է քո խոսք, ունա՛յն քո խրատ,
Միայն բամբասա՛նք, միայն ախտակիր
Հիշոցք որպես ծով կրափվին վերադ:

Նստած են նոքա բուրբոսած բանտում
Տաղաչափություն: Հուսահատություն
Ատում է նորանց: Լույս չէ քափանցում
Այդ մեռած կամֆի գերեզմանատուն:

Լուծվել է, լուծվել նոցա խելին իսպառ.
Ո՛ւր բժիշկ հմուտ, առեն մի հար.

Խրան զարբուցիչ և նշտաբերություն,
Սուր որպես հշտար, կծու որպես բույն:

25 մայիսի 1864-թ.

Մոսկվա

